

# ԲԱԶԷԱՎԱՆ ՈՐՄՈՐԴՈՒԹԻՒՆ



**Ի**հնումն ինչպէս երկրի շատ կողմանց մէջ, նոյնպէս և Հայաստանի անմասն ընդարձակ, ծաղկազարդ դաշտաց և զովաւունջ հովտաց մէջ, ուրիշ տեսակ տեսակ որորդութեանց հետ, անպակաս էր նաև բազէական որորդութիւնն: Այս բանիս վկայ և աւանդող է մեր ծանօթագոյն պատմիչներէն մին, Վազար Փարպեցին. որս գործներէն կ'երևի, որ շատ վարժ էին մեր նախնիք ամեն տեսակ որորդութեան: Գինջ նախարարք և մեծամեծ իշխանք զուարճութեան համար. տիգար, սուսերօք և ուրիշ գործիներով յերկրի կը տապալէին վիթխարի վարագուց յրամներ և այլ շատ տեսակ մեծա. մեծ կենդանիներ, իրենց որդուց մանկագոյնքն այլ, ծառայից և զաստիարակաց հետ՝ բազէ. ներով՝ թռչնոց այլ և այլ տեսակներ որսալու կ'երթային:

Այժմ բազէական որորդութիւնն գրեթէ բոլորովն խափանուած է Աւերոպայ, և այն ամէն երկիրներու մէջ՝ ուր յաճախած են հրա. գինոց գործածութիւնք. սակայն դեռ մեծ յարգ ունի և գործադրուի Ասիոյ կեդրոնն և Ափրիկէի հիւսիսային կողմերը.

Ի ընկի Թուրքաստան, ուր հրագինոց նուա. զութիւն կայ, բազէական որորդութիւնն բա. յորովն սամիրական է. փոքր և մեծ մարդիկ՝ ամենքն այլ կ'որսան, ամենքն ալ ունին իրենց թռչուններն. բայտ իրենց կարողութեան:

Թուրքաստանի ընկիւնք՝ ի մանկութենէ կը սկսին վարժիլ բազէական որորդութեան:

Սմբղանդի ճանապարհաց վրայ, փոքրաց մէջ տղայք որորդութիւն կ'ընեն, առ հասարակ թէ բազէներով և թէ ագռաւներով. որսացող թռչունքն կապուած են քարակ յունեներով. և ամէն որորդ իւր թռչունը կը կրէ ձեւաց վա. րայ: Ով որ պիտի ճանապարհորդէ դէպի ա. մայի ընդարձակ անապատներ, հետը կամ ձե. աաց վրայ և կամ ձիոյն թամբին արեղան վրայ գրած կը տանի իւր թռչունը. ճանապարհին վրայ երբ և տեսնէ որ և է որս մը, փաստան, լորամարդի, կարաւ, բազ, և այլն, նա կը հանէ իւր բազէին կաշեայ զիւանդը, և ուղղակի կը մղէ գրազէն որսին վրայ: Որսական թռչունն արսպուկեամբ կը բարձրանայ որսին վրայ, յետոյ թևերը ամփոփելով՝ բոլոր ուժով և ան. պիտի ճշդութեամբ ուղղակի կ'իջնկայ որսի վա. րայ, որ նա հազիւ երբէք կրնայ պրծիլ իւր գազնի նիւսններէն: Բազէից կամ որ և է որ. սացող կ'աշնոց գլխանոցը վերստին զնկելու հա. մար, շատ յարողութիւն կը պահանջուի. թռչ. նոյն կը ցուցնեն մի պատուա մը, բռնած

այլ թ և միջամտով, ցուցամատի վրայէն ալ կարեւած է գլխանոցը օղակով մը. երբ թռչ. նունը կ'երկնցընէ՝ վիզը միւր առնլու, յուս մը կ'անցնեն գլխանոցը. մի պատուան ալ չեն տար իրեն, ապա թէ ոչ, որսի վրայ յարձակելու ա. խորժակն կը կտրի:

Թուրքաստան կարգէ դուրս հարուստ է մեծ և փոքր յափտակիլ թռչուններով, որոց տե. տակաց կատարեալ ցանկ մը՝ դեռ լոյս տեսած չէ:

Տղայք ի մանկութենէ վարժած, խիստ լաւ կը յաղոյն որսի, և երբեմն ցինիւր ևս կ'որ. սան, որ եւրպացի բազէպանաց համար անկա. րիկ է: Տաշքէնի կողմերն կ'որսան կայսերա. կան և սև ցինիւր, կարաւ և լորամարդի: Թուր. քաստանի սովորական որսացող թռչունք են, բազէ և ճուռակ (ծըբար), որք կ'որսան փա. սիան, լորամարդի և կարաւ:

Որսի կը վարժեցընեն նաև գրեթէ ամեն տեսակ արուշներ, յայց ՚ի պերնիսէ (bondrée), գետարժույ և քանի մը գիշարանձ թռչնոց ցե. ղերէ: Ընդհանրապէս փոխանակ արուշներու է. զերը կը գործածեն. վասն զի աւելի մեծ են, զորսուր և աւելի զիրաւ վարժող:

Միայն կեդրոնական Ասիոյ կողմերը կը վար. ժեցընեն արժիւներ ալ որորդութեան, և մա. նասանդ ոսկեփետուր, կռնչող և փետրայից (penzats) տեսակները, ոչ յատուկ են Գարա. զովսի անապատին ալ մեծամեծ թռչունք կ'որսան աղուէս, վիթ, յամայր և նա և ճղէ. րու: Երբ որսը մեծկակ լլլայ, վեր բարձրացը. նելու համար՝ արծիւը կատաղորէն կ'իջնկայ իւր զուգի զլիսին վրայ, և կը շնայ աչքերը հանել:

Արծիւ տանող ձիաուրք՝ այդ ծանր կենդա. նին ձեւաց վրայ բռնելով շրոյնելու համար, կ'առնուն երկնցի մը, և կ'աթ կ'անցընեն թամ. քին այնեղան մէջ, բազուկին ալ կը գնեն այդ երկնցի վրայ:

Երբեմն բու ևս կը գործածեն Թուրքաս. տանի և հարուսային Սիբերիոյ մէջ, նապաս. տակներ, փոքր-սկիւռ և ցամաք որսալու հա. մար:

Ինչոց որովհետև բուն՝ գիշերները միայն կրը. նայ որսալ, պէտք է որոց հետևելու և գտնե. լու համար, բուի սուքերուն և պոսին կապել փորրիկ գանգիկներ: Ագռաւներն ևս շատ յար. մար են, և զիրաւ կը վարժին որորդութեան: Գասանք կը բռնեն ձեան աստին, և կը գործա. ծեն տղայոց վարժութեան համար. և որովհե. տեւ բաց ի մաղբերից (gibier à poil) ուրիշ ոչ

ինչ չեն որոտը, այժմ մեծ քիչ կը գործածեն գաստըք, բայց բուն պատճառն է, նապաստակաց գրեթէ բոլորովին սպառունն:

Որսացող թռչուններն երկու կերպով ձեռք կը բերուին. մէկ մի, այդ տեսակ թռչունը ձագերն կը հանեն իրենց բոյներէն, որ շատ դիւրին է միջին Ասիոյ անմայակ ընդարձակ գաւտերու և անապատաց մէջ, ուր ծառաց նուազութեան պատճառաւ, որսացող թռչունք ստիպուած են բոյն դնել գետնի վրայ և մացառներու մէջ: Մէկ մ'այլ, երբ կամենան շափահաւ ձագեր բռնել, ի գործ կը գրուի ամենապարզ կերպ մը. կը ժողովեն այնպիսի մեծ ու թնամա խճաքար, զորս կարենայ թռչունն կրլանել առանց գժուարութեան. քարերը կը ձգեն արեան մէջ. և կը թողուն որ արինն թանձրանայ անոնց վրայ, յետոյ կը դնեն այնպիսի տեղեր՝ ուր սովոր են դիմել որսացող թռչունք, որք որկրամուտութեամբ կը կրնան այն արինն տախիճերը, այնպէս որ սաստիկ ծանրանայով. այ չեն կրնար խաչիլ, որտորպէս ունի միջոց շուտով վրանին կը յարձակի ու կը բռնէ: Անշուշտ այնպիսի հանճարեղ որսորդութեան հնարողք, պէտք է ճիշդ եղած ըլլան:


Որսացող թռչունք երկու տեսակ են, վայրաթռիչ և բարձրաթռիչ. Թիւրք.էնք, Ղըրղըզք և

ճինք՝ սովորաբար վայրաթռիչները կ'ընտրեն. վասն զի սքաւ ուղղակի որսին վրայ կ'իջնեն, որպիսիք են, աստղափետուարք եւ (autours) և ուրուրք: Ընդ հակառակն բարձրաթռիչք կը սըլանան ի վիճի սգոյ մէջ՝ որսի վրայ ինկնայէ առջ. այս կերպը թէ և աւելի ընտիր է և յարմար մեծամեծ որսորդութեանց, բայց վայրաթռիչներու նման սրագ է բանակ չէ:

Շատերէ փորձուած և ականատեսներէ հաստատուած է, որ փոքր թռչունք աւելի յարմար են քաջ որսորդութեան քան մեծերը: Սովորաբար արծիւք այնչափ պատիւ չեն բերի իրենց տէրերուն, քան որչափ կը բերեն խոյտուհաւք և արտուտակեղք (hobereaux):

Բագէ/ց ցեղերը. որ ուրիշ աշխարհաց մէջ, սովորաբար ի միասին կը յարձակին որսի վրայ, Ասիոյ մէջ այդպէս չեն, այլ առանձին առանձին կ'որսան:

Բագէական որսորդութեան գործիներն շատ պարզ են. կաշեայ կամ կտաւէ գլխանոց մը, թռչունն գլուխը գոցելու համար. զայն առնուղին համար՝ այժի մտրթէ սպիտակ ձեռնոց մը, երկնի մը՝ յոգնած բազուկը վրան կոթնցընելու համար, և թմբիկի մը որսացող թռչունը վերակոշելու համար:



### ԱՐԵՓԱԿՆԱԿԱՆ ԱՆՈՒՄՆԵՐ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

**Ա**ՐԵՓԱԿՆ այժմ մեծ դեր կը խաղայ ի բժշկութեան. ուղղակի արեգական ճառագայթիւք կը բուսին ներքին խօթութիւններ, յօդացաւութիւններ, քնահատութիւններ, ջըղային հիւանդութիւններ, և այլն:

Ելթէ կը փափաղիմք առողջացընել ծիրեալ (atrophie) ձեռք մը, մէկուն յօդացաւութիւնը, ջըղաց ուժաթափութիւնը, ա՛մինէն ազգու և առաջնակարգ դարմանն է, զնեղ ծիրեալ ձեռքը արեգական ջերմիկ ճառագայթից ներքև, և կամ ինքնիին արտաջեալը արեգական մէջ թողուլ այնքան ժամ՝ որչափ որ կրնայ զիմանալ:

Քնահատութեան և ջըղային ակարութեանց դարմանն է արեգական մէջ լաւ մի քնանալն: Քաշեցէք հիւանդին անկողինը պատահանին մօտ, և թողուցէք որ հիւանդը բաւական ժամ հոն արեգական մէջ քնանայ: Արեգական ճառագայթքն ոչ միայն մարդու

ջերմութիւնը կ'առաւելուն, այլ կ'ունենան մեր վրայ տարբարանական և ելեկտրական ազդեցութիւնք: Ինչպէս արդի նշանատը բժիշկ մը կ'ըսէր, « Շատ հաւանական է որ արեգական ճառագայթքն մեր կազմութեան ներքին հիւսուածոց վրայ աւելի ազդեցութիւն ունենան՝ քան թէ ելեկտրական հոսանքն »:

Շատ հմուտ բժիկք փորձով կը հաստատեն, որ արեգական ազդեցութիւնը միակ դեղ է ջըղային և տապախառն (inflammatoire տծ. ինֆլաներիտի) ցաւերու:

Գլխի ցաւ ունեցող մը թող երթայ արեգական մէջ կենայ, և պիտի տեսնէ որ այս նորագիտ դրութեամբ՝ զլիսին ցաւը կ'անցնի:

Երբ որևիցէ հիւանդութիւն մը կ'ուզեմք արեգական ազդեցութեամբ անցընել, պէտք է ամենաթեթեւ զգե՛նուլ և այնպէս արեւուն մէջ կենալ. որչափ բարակ ըլլան զգեստք՝ այնքան շուտ կ'ըլլայ առողջութիւնն: